Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ  Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

# Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես կարևորել և արժևորել դասական երաժշտությունը հանրակրթական դպրոցներում

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Վարդանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն - - -

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որոշ մարդկանց համար դասական երաժշտություն լսելը ժամանակի վատնում է: Այն տեսակետը, որ միայն երաժշտական գիտելիքների որոշակի պաշար ունեցող ունկնդիրն է հասկանում և սիրում դասականներին, սխալ է: Իրականում արվեստի այս տեսակը հասկանալի է բոլորին: Պարզապես ոչ բոլորն են պատրաստ այն ընկալելու: Հանրակրթական դպրոցներում նույնպես, ցավոք, դասական երաժշտության ուսուցումն ու ընկալումը հետին պլան են մղվել: Դասական երաժշտության ընկալման և կիրառման մակարդակը կտրուկ նվազել է: Ներկայիս անորակ երաժշտության մեծածավալ տարածման պատճառով դասական երաժշտությունը բավականին հետ է մղվել: Դա իր բացասական ազդեցությունն է թողնում սերունդների գեղագիտական ճաշակի վրա:

Երաժշտության ու արվեստի դերը մեր կյանքում որոշելը բավականին բարդ է և գուցե չկարողանանք գտնել դրա պատասխանը: Երաժշտությունը անբացատրելի էներգիա է, որը մարդկային ուղեղը ստանում է և վերածում զգացմունքի : Հետևաբար յուրաքանչյուր անհատի մոտ երաժշտական էներգիան տարբեր է: Կարևոր է նաև իմանալ, որ յուրաքանչյուր երաժշտական ստեղծագործություն մաքուր էմոցիա է, եթե երաժշտությունը մեզ ոչ մի զգացմունք չի փոխանցել, ապա այն երաժշտություն չէ. դրանք զուտ ձայնային ալիքներ են:

Դպրոցական առարկաների համակարգում երաժշտությունը հանդես է գալիս ոչ միայն իբրև սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող, սովորողների հուզազգացմունքնային զարգացումը կազմակերպող, այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող միջոց: Պատահական չէ, որ դեռևս անտիկ ժամանակաշրջանում Երաժշտությունը կրթական համակարգում եղել է կարևոր ու մեծ նշանակություն ունեցող առարկա:

Հանրակրթական դպրոցում «Երաժշտություն» առարկա դասավանդման մեջ առանձնակի բարդ է դրա գնահատումը: Շատ մասնագետներ կարծում են որ արվեստի հետ կապ ունեցող առարկաները ընդհանրապես չպետք է գնահատվեն՝ կապված սովորողի բնատուր ընդունակությունների և առանձնահատկությունների հետ:

Այս աշխատանքում կծանոթանաք «Երաժշտություն» առարկայի և հատկապես

դասական երաժշտության դասավանդման կարևորությանը և ազդեցությանը: Կտեսնեք դրանց դասավանդման մեջ առաջացած բարդությունները, գնահատման առանձնահատկությունն ու մեթոդները:

Շոշափվող թեմաներ՝

- Դասական երաժշտության դերը սովորողի կյանքում
- Երաժշտություն առարկայի գնահատումը հանրակրթական դպրոցներում

# ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ժամանակակից երաժշտական ստեղծագործություն (ռիթմիկ, բլյուզ, ջազ կամ փոփ երաժշտություն) իր մեջ կրում է դասական երաժշտության տարրեր: Նույնիսկ մերօրյա ռեփը և ռոքնռոլը ունեն դասական երաժշտության երանգներ, որոնք վարպետորեն միաձուլվում են դասական երաժշտությանը: Այսպիսով, ժամանակակից երաժշտության մեծ մասը ուղղակիորեն գոյություն չէր ունենա առանց այնպիսի մեծ կոմպոզիտորների, ինչպիսիք են Բախը, Հայդենը և Մոցարտը: Եթե ուշադրություն դարձնենք վերջին տասնամյակում երաժշտության և արվեստի մեջ տեղի ունեցած փոփոխություններին, կտեսնենք, որ ոչ միայն ձախողել ենք այն բարելավվելու միտումը, այլ, ընդհակառակը, հետընթաց ենք ապրել: Այս խնդիրը կրթական համակարգում ի հայտ է եկել դեռևս տասնամյակներ առաջ: «Երաժշտություն» առարկան, և առհասարակ դասական երաժշտությունը բավականաչափ ուշադրություն չի դարձվում մերօրյա հանրակրթական դպրոցներում: Երաժշտությունը գնալով դիտվում է որպես կամընտրական առարկա՝ մի բան, որը համարժեք է զբաղմունքի, որը պարզապես զուգահեռ է ընթանում «ակադեմիական» առարկաների հետ: Սա հանգեցնում է դասական երաժշտության հանդեպ արհամարհանքին: [1]

Մաքսվել Դեյվիսը պատմում է թե ինչ արտասովոր կերպով է դասական երաժշտությունը ազդել այն երիտասարդների վրա, որոնց նա դասավանդում էր,նրանց կենսամակարդակի վրա թե՛ դպրոցի ներսում,և թե՛ առօրյա կյանքում: «Կարծես երաժշտությունը կատալիզատոր կամ ձգան լիներ, ինչը շատ դեպքերում առաջացնում էր ստեղծագործական ըմբռնում արտաքուստ իրար հետ կապ չունեցող առարակաների մեջ՝ օտար լեզուներ, մաթեմատիկա, կրոնագիտություն»:[2]

Արվեստաբաններն ու երաժշտագետները պնդում են, որ դասական երաժշտությունը գունավորում է երևակայությունը, հույզերը, զգացմունքները և ստեղծագործական ունակությունները, որոնք նույն ինտենսիվությամբ չեն

[1] https://www.gramophone.co.uk/blogs/article/why-are-our-schools-pushing-classical-music-to-the-margins 30. 08. 2022

[2] Նույն աղբյուրից, 30.08.2022

առաջանա երաժշտության այլ ձևեր լսելիս:

Վերջին ուսումնասիրությունները բերել են այն եզրահանգմանը, որ այն երեխաները, ովքեր ծանոթանում են դասականներին կյանքի վաղ փուլում, ավելի բարձր ակադեմիական մակարդակի են հասնում, քան այն երեխաները, ովքեր երիտասարդության տարիներին չեն ուսումնասիրել ու ընկալել դասական երաժշտությունը: Ուսումնասիրությունները նաև ցույց են տվել , որ այն սովորողները, դեռահասները, չափահասները և մեծահասակները, ովքեր հաճախ են առնչություն ունեցել դասական երաժշտության հետ, անհամեմատ ավելի մեծ հաջողություններ են գրանցում թե՛ ուսումնական հաստատությունում և թե՛ կյանքում:

Յուրաքանչյուր սովորողների և երիտասարդ անհատի պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու դասական մեծ կոմպոզիտորներին, որպեսզի դասական երաժշտության գնահատումը դառնա նրանց կյանքի փորձառությունների հավերժական մասը: Յուրաքանչյուր ոք ունի տարբեր նախասիրություններ, ճաշակներ և զգայարաններ, ինչը մեզ անհատականություն է դարձնում: Որոշ մարդիկ կնախընտրեն տարբեր տեսակի երաժշտություն՝ կախված տրամադրությունից և կյանքի իրադարձություններից: Բայց դասական երաժշտության վաղ ներդրման և ծանոթանալուց հետո երաժշտության և արվեստի բոլոր այլ ձևերի նկատմամբ գնահատանքն ավելի շատ կզարգանա, քան եթե երեխաները և անհատները ընդհանրապես չծանոթանան դասականներին:

Դպրոցները պետք է հնարավորություն ընձեռնեն սովորողներին ծանոթանալու դասականներին, մասնակցելու երաժշտության գնահատմանը և ունենալու հնարավորություն՝ տիրապետելու որևէ երաժշտական գործիքի, դպրոցական նվագախմբի անդամ լինեն և մասնակցեն դասական երաժշտության ստեղծմանը:

Շատ հաճախ հանրակրթական դպրոցներում սովորողները տուժում են բյուջետային սահմանափակումների արդյունքում[3]: Առանց երաժշտության և արվեստի իմացության կրթական գործընթացը ավարտված չէ: Շատ երեխաների համար դպրոցում երաժշտության դասը միակ վայրն է, որտեղ նրանք կարող են լսել

[3] https://www.connollymusic.com/stringovation/beyond-pop-the-case-for-classical-music-in-the-classroom 01. 09. 2022

դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները և իմանալ դրանց մասին: Դպրոցականների միայն փոքր մասն է հաճախում  երաժշտական դպրոցներ կամ խմբակներ, համերգներ և երաժշտական թատրոններ: Տանը երեխաները ամենից հաճախ շրջապատված են հեռուստատեսության, համակարգչային խաղերի և ռադիոյի երաժշտությամբ: Դ.Բ.Կաբալևսկին նման երաժշտությունն անվանում է «երաժշտական աղբ»[4]: Իր միապաղաղության պատճառով նման երաժշտությունը հակված է ամուր նստել երեխայի գլխում: Դասականների հետ ծանոթության միջոցով արվում է քայլ  դեպի գեղարվեստական բարձր ճաշակի և լուրջ երաժշտության հանդեպ հետաքրքրության ձևավորման: Երաժշտական լեզուն, որով երեխաները դաստիարակվում են տարրական դպրոցում, թվում է, թե ամենահեշտն է, ամենից հասկանալին ու գեղեցիկը: Նրանք այս լեզուն օգտագործելու են կյանքի ավելի ուշ փուլում ՝ հարստացնելով նրանց ներաշխարհը, զարգացող հիշողությունը, ուշադրությունը և խոսքը:

Որպես հասարակություն՝ մենք պետք է դասական երաժշտությունը դարձնենք առաջնահերթություն մեր տանը և մեր կյանքում: Այն պետք է  սկսել  ուսումնասիրել շատ վաղ հասակից, քանի որ դա ունի ոչ միայն արվեստի շարունակության, այլև առողջ, մարդու աճի համար: Դասական երաժշտությունը ոչ միայն սնուցում է մեր հոգին, այլև զարգացնում է մեր միտքը այնպիսի ձևերով, որոնք հիմնավորվել են վերջին տարիների բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում: Շատ երիտասարդներին դասական երաժշտությանը ծանոթացնելը փաստագրված է, որն օգնում է զարգացնել լեզվական հմտությունները, բանականությունը և տարածական ինտելեկտը[5]: Երբ մենք  աճում և խորանում ենք դասական երաժշտության աշխարհում մասնավոր դասերի, դպրոցական նվագախմբերի, երիտասարդական նվագախմբերի, համերգների հաճախումների և այլնի միջոցով, մենք սովորում ենք ինքնակարգապահություն, խնդիրներ լուծելու հմտություններ, գրավոր, խոսակցական և խորապես զգացված «երկրորդ լեզու»:  Իսկ մենք բոլորս գիտենք, թե որքան կարևոր են դրանք  լավ ապրելու համար: Երբ մենք հասնում ենք հասուն տարիքի, այս հմտությունները փոխանցվում են՝ զարգացնելու մեր մասնագիտական և անձնական աշխարհի բոլոր մյուս ոլորտները: Իսկ այս հմտությունները  պետք է

[4] https://www.prodlenka.org/metodicheskie-razrabotki/460403-klassicheskaja-muzyka-na-urokah-v-nachalnoj-s 30. 08. 2022

[5] https://www.connollymusic.com/stringovation/beyond-pop-the-case-for-classical-music-in-the-classroom01.09. 2022

սերմանել ապագա սերունդների մեջ:

Դասական երաժշտության օգտագործումը, դրա հանրահռչակումը անհրաժեշտ և շատ կարևոր մասն է լիարժեք և ներդաշնակ անհատականության ձևավորման գործում:

Ըստ Վ.Ա.Սուխոմլինսկու՝ «Առանց երաժշտական կրթության լիարժեք մտավոր զարգացումը անհնար է»: Դասական երաժշտությունն այս երաժշտական կրթության հիմքն է: Պարզապես պետք է հետաքրքրություն առաջացնել սովորողների հանդեպ:

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ոչ բոլոր սովորողներն են օժտված ձայնային տվյալներով, երաժշտական լսողությամբ, երաժշտության ճիշտ ընկալման, յուրացման և վերարտադրողականության ունակությամբ, հմտությամբ և կատարողունակությամբ, ռիթմի զգացումով և այլն: Այդ իսկ պատճառով երաժշտությունը, որպես հանրակրթական դպրոցներում դասավանդվող առարկա մերօրյա սովորողներին ավելի հասանելի, մատչելի և դարձնելու համար առաջարկվում է «Երաժշտություն» առարկան բաժանել հետևյալ բաժինների.

- Ունկնդրություն
- Երգեցողություն
- Երաժշտության տեսություն
- Երաժշտական գրականություն
- Նոտագրություն

## Ունկնդրություն

Այս բաժնում սովորողից պահանջվում է ցուցաբերել լուրջ վերաբերմունք դասավանդողի կողմից առաջարկված ունկնդրության նյութի նկատմամբ , որպեսզի այնուհետև կարողանա կատարել ինքնուրույն հետևություններ ունկնդրած նյութի վերաբերյալ: Հատկապես հանրակրթական դպրոցներում սովորողների մոտ կա միտում չհարգելու  հատկապես դասական երաժշտության ունկնդրությունը, դիտմամբ խանգարել դասապրոցեսը և այլն: Կարծում ենք, կարելի է պարզապես սովորողներին ներկայացնել տվյալ երաժշտության  նաև վերամշակված տարբերակը, փորձել հետաքրքրություն արթնացնել սովորողների մոտ: Կարելի է խնդրել սովորողներին նկարագրել, թե ինչ զգացողություններ ունեին նյութը ունկնդրելու ժամանակ:  Սովորողների կողմից շատ սիրված զբաղմունք է երաժշտությունը նկարելը: Դասը պլանավորվում է հաշվի առնելով երաժշտության վրա նկարելու ժամանակը: Երաժշտություն նկարելը օգնում է սովորել այն, ընդլայնում է երաժշտական ստեղծագործությունը հուզականորեն զգալու ունակությունը:

Երաժշտության դասին դասական երաժշտության ունկնդրումը, որպես կանոն, հուզական արձագանք է առաջացնում: Ի վերջո, երաժշտական ստեղծագործությունը սկզբում ընկալվում է որպես հանելուկ, իսկ այն գուշակելը նման է գլուխկոտրուկ  լուծելուն:

## Երգեցողություն

Այս բաժնում սովորողից պահանջվում է ուսուցանված  երգի ինտոնացիոն մաքուր և հուզական կատարում:

Ուղեղի բազմաթիվ գործառույթներ, որոնք օգտագործվում են երաժշտական գործունեությանը մասնակցելու ժամանակ, նույնպես օգտագործվում են երեխաների կողմից՝ հասնելու հիմնական զարգացման կարևոր կետերին: Խոսքը և երաժշտությունը, օրինակ, ունեն մի քանի ընդհանուր մշակման համակարգեր: Երաժշտական փորձառությունները կարող են ազդել լեզվի ընկալման վրա, որն իր

հերթին ազդում է կարդալ սովորելու վրա: Իրականում, երաժշտությամբ զբաղվելը կարող է ուժեղացնել ճանաչողական գործառույթները, որոնք առանցքային են երեխաների ուսուցման համար,

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երաժշտությանը մոտ սովորողները ավելի դյուրին են ըմբռնում անգլերեն, մաթեմատիկա և բնագիտական առարկաներ՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական ծագումից և նախկին ակադեմիական մակարդակից:

## Երաժշտության տեսություն

Երաժշտական տեսություն բաժնում դասավանդողի կողմից ստուգվում է սովորողի կուտակած երաժշտական տեսական գիտելիքները: Իսկ ի՞նչ է Երաժշտական տեսությունը:

Երաժշտության տեսությունը գրավոր երաժշտության ըմբռնումն է: Այն լեզու է, որն ապահովում է կոմպոզիտորների և երաժիշտների՝միմյանց հետ հաղորդակցվելը: Երաժշտության տեսությունից հասկացող սովորողները կարող են կարդալ հարյուրավոր տարիներ առաջ գրված երաժշտական ստեղծագործություն և հասկանալ, թե ինչ էր ուզում կոմպոզիտորը լսել իրենց երաժշտության մեջ, ինչպես նաև այդ երաժշտության պատմական համատեքստը:

Շատ կարևոր է ճիշտ ընտրել ուսուցանվող թեման, դրա հանձնարարման ծավալը և այլն:

## Երաժշտական գրականություն

Երաժշտական գրականություն բաժնում սովորողից պահանջվում է հստակ գիտելիք կոմպոզիտորների կյանքի ու ստեղծագործական գործունեության վերաբերյալ:

Տարրական դասարանների սովորողների մոտ դասական երաժշտության

նկատմամբ հետաքրքրություն ձևավորելիս պետք է նկատի ունենալ, որ դասի համար ճիշտ ընտրված և պատրաստված նյութը դրա հաջող անցկացման հիմնական պայմանն է: Տարրական դասարաններում դասական երաժշտության անդրադառնալիս կարծում ենք կարևոր են հետևյալ «մանրուքները».

- կոմպոզիտորի կյանքի մասին պատմելիս խուսափել միայն չոր տեղեկությունը տալուց, պատմությունը գունավորեք մեկ վառ դրվագով կամ մանրամասնությամբ, որը մոտ է երեխաների ըմբռնմանը
- դասական երաժշտություն լսելիս օգտագործել, դիրիժորության, թատերականացման, նկարչության տեխնիկան
- հաճախել դասական երաժշտության համերգների երեխաների հետ, որոնք հարմար են մանկական լսարանի համար
- խրախուսել դասականների նկատմամբ հետաքրքրության ցանկացած դրսևորում
- համեմատել դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների հետ, գտնել նմանություններ և տարբերություններ

## Նոտագրություն

Այս և վերջին բաժնում սովորողից պահանջվում է նոտաների իմացություն, անցած երգի կատարում նոտաներով: Երաժշտության նոտագրման համակարգը երաժշտության ամենակարևոր տարրերից է. դրանք նույնքան կարևոր են երաժշտության համար, որքան գրավոր համակարգերը խոսքի կամ գրավոր խոսքի համար. նրանք կատարում են նմանատիպ գործառույթ: Առանց երաժշտական նոտագրման համակարգերի, երաժշտությունը կարելի էր ստեղծել կամ նվագել միայն

ամենապրիմիտիվ ձևով:

Երաժշտության նոտագրման համակարգը երաժշտությունը ներկայացնելու համար նախատեսված խորհրդանիշների համակարգ է, որպեսզի այն կարողանան նվագել, կարդալ կամ ձայնագրել միատեսակ : Սա, այսպիսով, հնարավորություն է տալիս երաժշտականորեն հաղորդակցվելու միմյանց հետ հնարավորինս հասկանալի ձևով[6]:

Վերը նշված կետերի կիրառումը օգնում է սովորողներին ձևավորել «Երաժշտություն» առարկայի վերջնարդյունք, այսինքն, եթե աշակերտը օժտված է երաժշտական որոշակի տվյալներով, բայց թերանում է մնացած կետերին ունեցած իր վերաբերմունքով և աշխատասիրությամբ, ապա նրա վերջնարդյունքը չի կարող լինել գերազանց և հակառակը: Սա «Երաժշտություն» առարկայի գնահատման թերևս ամենաբարդ, բայց միևնույն ժամանակ ամենաարդյունավետ մեթոդներից է:

[6] http://electricka.com/etaf/muses/music/music_theory_and_practice/music_notation/music_notation_home.htm 06. 09. 2022

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցներում երաժշտական դաստիարակման նպատակը անհատի հոգևոր, բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է:

Այդ նպատակի իրականացումը դպրոցական «Երաժշտություն» առարկայի և հատկապես դասական երաժշտության առջև դնում է հետևյալ խնդիրները՝

- Սեր և հետաքրքություն առաջացնել սովորողի մոտ
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ընդունակությունները, ստեղծագործական երևակայությունը, կատարողական հմտությունները
- Հարգանք ներշնչել դասական երաժշտության նկատմամբ
- Ճիշտ գնահատել կարողանալու միջոցով սովորողին ոգևորել ավելի լավ սովորելու և արժևորելու դասական երաժշտությունը:

Դասապրոցեսն ավելի հետաքրքիր և «բազմաժանր» դարձնելու, իսկ սովորողին գնահատելը ավելի իրական դարձնելու համար կարելի է օգտվել վերը նշված մեթոդից. դասապրոցեսը բաժանել մի քանի մասերի և ըստ սովորողի կատարած աշխատանքի, մասնակցության, լուրջ վերաբերմունքի և ունակություններ կատարել ճիշտ գնահատում:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.gramophone.co.uk

2. www.connolly.com

3. www.prodlenka.org

4. electricka.com